Արձանագրություն N 2

«ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/12» ծածկագրով գնանշման հարցման միջոցով

գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստից

Պատվիրատուի հասցեն՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 «13» «դեկտեմբեր» 2017թ.

ժ 16:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Աբրահամյան

Հանձնաժողովի անդամներ՝

Սեյրան Զորողլյան- պահեստապետ

Ցոլակ Սարգսյան- սպասարկման ծառ. պետ

Արթուր Գասպարյան- տնօրենի օգնական

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան

I. Գնանշման հարցման միջոցով ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/12 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

Համաձայն ՀՀ Կառավարության որոշման 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 46-րդ կետի հրավիրվել է հայտերի գնահատման նիստ, որի ընթացքում արձանագրվել է, որ.

1.1 Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է հրավերի 2.4 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերվող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջներին:

1.2 Մասնակցի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

II. Գնանշման հարցման միջոցով ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/12 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատման արդյունքների հաստատման և ամփոփման մասին

2.1 Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել Թիվ 1 չափաբաժնի համար «Ֆլեշ» ՍՊԸ-ին

2.2 Ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը, ըստ նույն հոդվածի 4-րդ կետի տվյալ գնման ընթացակարգի համար անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

2.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն հայտերի գնահատման նիստին հաջորդող աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակել տեղեկագրում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արման Աբրահամյան

Անդամներ՝

Սեյրան Զորողլյան

Ցոլակ Սարգսյան

Արթուր Գասպարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան